https://doi.org/10.46991/hc.2023.20.2.140

Historical disputes over the Second World War and its consequences in the context of relations between the European Union and Russia

Arshaluys Teteyan
https://orcid.org/0009-0001-3613-4647
PhD in History, Chair of the History of Armenia's Neighboring Countries, YSU
a.teteyan@ysu.am

Keywords: European Parliament, retelling of history, rethinking history, «Politics of memory», Second world war, Memory Wars, Munich Agreement, Ribbentrop-Molotov Pact.

The aim of the study is to analyze the role and the place of the "Politics of memory" in the context of relations between Russia and European Union. Who won World War II ?, what was the role of the second front ?, the actions of the Red Army in the countries of Eastern and Central Europe and many other problems always had been the apple of discord between Russian and Western historians. Over the past decades, these problems have become an integral part of the already tense relations between Russia and European countries. These problems have the important role in the context of Russian-European Union relations. Over the past decades, European organizations EU and the Council of Europe have adopted several resolutions that provoked a mixed reaction in Russia.

In the framework of this work, historical discussions between Russia and the EU are considered in the context of the Eastern policy of the EU, in particular after the implementation of the European Neighborhood Policy and Eastern Partnership programs.

Երկրորդ աշխարհամարտի և դրա հետևանքների շուրջ պատմական բանավեճը Եվրոպական միություն-Ռուսաստան հարաբերությունների համատեքստում

Արշալույս Տետեյան
պ.գ.թ., ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի ասիստենտ

Հիմնաբառեր՝ Եվրոպական խորհրդարան, պատմության վերաշարադրում, պատմության վերաիմաստավորում, «հիշողության

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 140-149.
Received: 29.01.2023
Revised: 18.03.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

քաղաքականություն», Երկրորդ համաշխարհային պատերազմ, «հիշողության պատերազմներ», Մյունխենյան համաձայնագիր, Ռիբբենտրոպ-Մոլոտով համաձայնագիր։

Հոդվածը նվիրված է Եվրոպական միության և Ռուսաստանի հարաբերությունների համատեքստում «հիշողության քաղաքականության» տեղի և դերի վերլուծությանը: Ո՞վ է հաղթել պատերազմում, ի՞նչ նշանակություն է ունեցել երկրորդ ճակատի բացումը, Կարմիր բանակի գործողությունները Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում և բազմաթիվ այն հիմնահարցեր մշտապես եղել են բանավեճի առարկա ռուսաստանյան և արևմտյան պատմաբանների միջև: Վերջին տարիներին այս հիմնահարցերը դարձել են ԵՄ-ի և Ռուսաստանի առանց այդ էլ խիստ լարված հարաբերությունների անբաժանելի մասը: Ռուսական քաղաքական և հասարակական շրջանակների կողմից բացասական արձագանք են ստանում Երկրորդ աշխարհամարտի և դրա արդյունքների վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի, Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված բանաձևերը:

Ներկայացված հոդվածի շրջանակներում ԵՄ-ի և Ռուսաստանի հարաբերությունների համատեքստում պատմական բանավեճը ներկայացվում է ԵՄ-ի արևելյան քաղաքականության ակտիվացման տարբեր փուլերում՝ Եվրոպական հարևանության քաղաքականության իրագործումից մինչև Արևելյան գործընկերություն նախաձեռնություն:

Историческая дискуссия вокруг Второй мировой войны и его последствий в контексте взаимоотношениях Европейского Союза и России

Аршалуйс Тетеян
к.и.н., ассистент кафедры истории сопредельных стран Армении ЕГУ

Ключевые слова: Европейский Парламент, пересказывание истории, переосмысление истории, «политика памяти», Вторая мировая война, «войны памяти», Мюнхенское соглашение, Пакт Молотова-Риббентропа.

Целью исследования изучение места и роли «политики памяти» в контексте отношений Европейского союза (ЕС) и России. Кто выиграл Вторую Мировую войну, какое значение имело открытие второго фронта, действия Красной Армии в странах Восточной и Центральной Европы и многие другие проблемы всегда были яблоком раздора между российскими и западными историками. За последние десятилетия эти проблемы стали неотъемлемой частью *и без того напряженных отношений России и европейских стран. Немаловажную роль играют эти вопросы в отношениях ЕС и России. За последние десятилетия европейские организации ЕС, Совет Европы приняли несколько резолюций, которые вызвали неоднозначную реакцию в России.*

Historical disputes over the Second World War and its consequences in the context of relations between the European Union and Russia

Երկրորդ աշխարհամարտի և դրա հետևանքների շուրջ պատմական բանավեճը Եվրոպական միություն-Ռուսաստան հարաբերությունների համատեքստում

В рамках данной работы рассматриваются исторические дискуссии между Россией и ЕС в контексте восточной политики ЕС в частности после реализации программ Политики Европейского соседства и Восточного партнерства.

* * *

Ներածություն: 2012 թ. Եվրոպական միությանը շնորհվեց Խաղաղության Նոբելյան մրցանակ՝ Եվրոպա աշխարհամասը պատերազմներից վեց տասնամյակ զերծ պահելու համար: Այս իրադարձությունից տաս տարի անց պատերազմը նորից վերադարձավ Եվրոպա: 2022 թ. փետրվարի 24-ին ռուս-ուկրաինական պատերազմն, ինչպես ռուսական, այնպես էլ եվրոպական խոսույթ վերադարձրեց «սառը պատերազմի» ժամանակաշրջանի մոռացված արտահայտություններ և եզրույթներ՝ ցավալիորեն մեկ անգամ ևս ապացուցելով անգլիացի գրող Ջորջ Օրուելի «1984» վեպում հանդիպող այս մտքի արդիականությունը. «Իմանալ և չիմանալ, գիտակցել ողջ ճշմարտությունը, մինչդեռ ասել խնամքով հորինված ստեր, ունենալ միմյանց հակասող երկու կարծիք, բայց հավատալ երկուսին էլ, կիրառել տրամաբանությունն ընդեմ տրամաբանության… մոռանալ ինչ պետք է մոռանալ, իսկ հետո անհրաժեշտ պահին դարձյալ հիշել, իսկ հետո նորից արագ մոռանալ» [Օրուել, 2012, 38]:

Հասկանալի է, որ Ուկրաինայում ընթացող ռազմական գործողությունները, Արևելյան Եվրոպայում քաղաքական և տնտեսական բոլոր զարգացումները հիմնավորելու և արդարացնելու համար գործի են դրվում բոլոր միջոցները, որոնց թվում ոչ երկրորդական տեղ է զբաղեցնում պատմությունը և անցյալի իրադարձությունների կամայական և սեփական շահերին համապատասխան մեկնությունը: Ընդ որում, այս ոլորտում և եվրոպական երկրները, և Ռուսաստանը ունեն բավական հարուստ փորձառություն:

Վերջին տասնամյակներում պետությունների ներքին և արտաքին քաղաքականության մեջ կարևորագույն գործոն է դարձել պատմության վկայակոչումը՝ որպես այս կամ այն իրողության հիմնավորում: Հատկապես Արևելյան Եվրոպայի երկրներում սոցիալիստական համակարգի փլուզումից հետո լայն տարածում են ձեռք բերել այնպիսի հասկացություններ, ինչպիսին են «հիշողության քաղաքականությունը», «հիշողության պատերազմները»: Հայտնի փաստ է, որ այս իրողությունները հատկապես բնորոշ են Լեհաստանին, որտեղ գործում է Ազգային հիշողության ինստիտուտը, որի նպատակը խորհրդային և նացիստական վարչակարգերի քաղաքականության ուսումնասիրությունն է: Հասկանալի է, որ ռուս-լեհական հարաբերությունները բավական մեծ ներգործություն ունեն Եվրոպական միության (ԵՄ) և Ռուսաստանի հարաբերությունների վրա:

Նշենք, որ Երկրորդ աշխարհամարտի և դրա հետևանքների շուրջ պատմական բանավեճի տարբեր հիմնահարցեր ուսումնասիրվել են ինչպես ռուսական, այնպես էլ արևմտյան պատմագիտական և քաղաքագիտական մտքի ներկայացուցիչների կողմից: Սակայն, հարկ է նշել, որ վերոնշյալ հիմնախնդիրները առանձին քննության չեն ենթարկվել ԵՄ-ի արևելյան քաղաքականության և Ռուսաստանի հետ լարվածության նոր օջախների ձևավորման համատեքստում:

ԵՄ-ի և Ռուսաստանի միջև պատմական բանավեճի հիմնական դրույթները: 2022 թ. փետրվարին սկսված ռուս-ուկրաինական պատերազմի ծավալման հետ զուգընթաց խիստ փոխվեց եվրոպական և ռուսաստանյան քաղաքական և հասարակական գործիչների խոսույթը՝ դառնալով առավել կոշտ՝ ավելի հաճախ հիշեցնելով 1940-ական թթ. երկրորդ կեսին հնչող ելույթները և հայտարարությունները: Ինչպես օրինակ՝ Ու. Չերչիլի 1946 թ. մարտի 5-ի Ֆուլտոնյան հայտնի ելույթը կամ Ի. Ստալինի «Պրավդա» թերթում 1946 թ. մարտի 14-ին լույս տեսած հարցազրույցը: Երկու դեպքում էլ նախկին դաշնակիցների խոսույթից իսպառ վերացել էին պատերազմի տարիներին նրանց միջև հաստատված նամակագրության մեջ հանդիպող փոխադարձ երախտագիտության և գնահատանքի բազմաթիվ օրինակները [Переписка председателя Совета министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой отечественной войны 1941-1945 гг., 1976, 416-417]:

Հայտնի փաստ է, որ պատմության վերաշարադրումը, պատմական փաստերի և իրադարձությունների սխալ մեկնաբանությունը, խեղաթյուրումը, պատմական իրարամերժ նարատիվները, դասագրքերում տեղ գտած ձևակերպումները եվրոպական երկրների և Ռուսաստանի հարաբերություններում բավական կարևոր տեղ են զբաղեցնում: Ցավալիորեն այս իրողությունները հատկապես սրվում են ԵՄ-ի արևելյան քաղաքականության ակտիվացման հետ զուգահեռ: Երկու կողմերի համար էլ առանցային նշանակություն ուներ Երկրորդ համաշխարհային պատերազմը, դրան նախորդող և հաջորդող իրադարձությունների մեկնաբանությունը: Ո՞վ է հաղթել պատերազմում, ի՞նչ դերակատարություն է ունեցել Խորհրդային Միությունը, ո՞րն էր երկրորդ ճակատի բացման նշանակությունը, ԽՍՀՄ գործողությունները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, Մյունխենյան գործարքն ու Մոլոտով-Ռիբբենտրոպ համաձայնագիրը. սրանք այն հարցերն էին, որոնք պատմագիտական մտքի ներկայացուցիչներին բաժանում էին և շարունակում են բաժանել երկու հակադիր ճամբարների:

Ընդ որում, երկու կողմն էլ պատասխանատու է պատմության գործառույթները անտեսելու՝ այն է գնահատական տալ պատմական իրադարձություններին, բացահայտել ճշմարտությունը, բացառել պատմության ընթացքում թույլ տրված սխալների կրկնությունը, ինչպես նաև պատմական իրողությունները խեղաթյուրելու և այն պատերազմի արդարացմանը ծառայեցնելու համար:

Ինչպես արդեն նշեցինք, այս բանավեճը հաճախ թեժանում է ԵՄ-ի արևելյան քաղաքականության ուղղությամբ ակտիվության համատեքստում, ինչպես օրինակ 2003-2004 թթ. Եվրոպական հարևանության քաղաքականության, 2009 թ. Արևելյան գործընկերություն նախաձեռնության դեպքում: Այսպես, պատմության շուրջ բանավեճը վերածվում է աշխարհաքաղաքական գործընթացների անբաժանելի մաս:

Եվրոպական միության դիտանկյունը:

2004 թ. մայիսին ԵՄ-ի անդամ դարձան տաս երկրներ, որոնք փոխեցին Միության քարտեզն ու սահմանները: Այս իրադարձությունների հետ էր փոխկապակցված ԵՄ-ի բավական հավակնոտ ծրագրերից մեկի՝ Եվրոպական հարևանության քաղաքականության հիմնադրումը: ԵՄ-ի հարաբերությունների խորացումը նախկին ԽՍՀՄ երկրների հետ, ինչպես նաև 2003-2005 թթ. տեղի ունեցած «գունավոր հեղափոխությունները» Ուկրաինայում, Վրաստանում և Ղրղզստանում ԵՄ-ի

և Ռուսաստանի միջև աշխարհաքաղաքական լարվածության նոր պատճառ դարձան: Այս լարվածությունը արտահայտվեց երկու կողմերի հռետորաբանության մեջ: Անխուսափելիորեն ակտիվացան նաև պատմական անցյալի՝ մասնավորապես Երկրորդ աշխարհամարտի, դրա արդյունքների և հետևանքների վերաբերյալ քննարկումները: Եվրոպական միությունը հատկապես շեշտադրում է ստալինիզմը, Արևելյան Եվրոպայի երկրների օկուպացիան և խորհրդային իշխանությունների կողմից կիրառված բռնությունները:

Հատկապես մեծ արձագանք ստացավ 2005 թ. մայիսի 12-ին Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված բանաձևը՝ նվիրված Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակի 60-ամյակին: Ինչպես այս, այնպես էլ հետագայում ընդունված բանաձևերը շեշտադրում էին ստալինյան բռնապետության տիրապետության ժամանակշրջանը, որը թոթափելուց հետո միայն արևելաեվրոպական երկրները կարողացան վերամիավորվել ԵՄ-ի հետ [European Parliament resolution on the sixtieth anniversary of the end of the Second World War in Europe on 8 May 1945]: Աստիճանաբար առաջ էր գալիս ԵՄ-ի և Ռուսաստանի միջև գլխավոր «գայթակղության քարը»: Եվրոպական կողմը Երկրորդ աշխարհամարտում տարած հաղթանակի թեման պարտադիր համադրում էր ստալինյան բռնաճնշումների վերաբերյալ թեզով, ինչը բացասական արձագանք էր ստանում Ռուսաստանում: Խնդիրն այն է, որ Եվրոպական խորհրդարանի բանաձևերը կարծես անուղղակի զուգահեռներ էին անցկացնում ետպատերազմյան իրողությունների և ներկայումս նախկին ԽՍՀՄ երկրներում ընթացող գործընթացների միջև:

Ասվածի ապացույցը 2008 թ. օգոստոսին տեղի ունեցած ռուս-վրացական հինգօրյա պատերազմից հետո ծավալվող իրադարձություններն էին: Պատերազմից օրեր անց՝ 2008 թ. սեպտեմբերի 23-ին Եվրոպական խորհրդարանը օգոստոսի 23-ը հռչակեց ստալինիզմի և նացիզմի զոհերի հիշատակի եվրոպական օր [Declaration of the European Parliament on the proclamation of 23 August as European Day of Remembrance for Victims of Stalinism and Nazism]: Մեկ տարի անց՝ 2009 թ. ապրիլի 2-ին Եվրոպական խորհրդարանն ընդունեց բանաձև «Եվրոպական խղճմտանքը և տոտալիտարիզմը» վերնագրով [Report from the Commission to the European Parliament and to the Council. The memory of the crimes committed by totalitarian regimes in Europe]: Բանաձևը կարևորվում էր նացիստական և խորհրդային սիմվոլիկայի վերացումը, փողոցների անվանափոխումը, հանրային վայրերից այդ անցյալը հիշեցնող հուշարձանների ապամոնտաժումը: ԵՄ աջակցությամբ կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ. 2010 թ. փետրվարին «Կոմունիզմի ոճրագործությունները, Եվրոպան Ռիբբենտրոպ-Մոլոտովի պակտից 70 տարի անց», 2009 թ. հոկտեմբերին Եվրոպական խորհրդարանում ստեղծվեց պատգամավորների ոչ ֆորմալ խումբ, որոնց նպատակն էր տարբեր պատումների (նարատիվների) հաշտեցումը [Report from the Commission to the European Parliament and to the Council. The memory of the crimes committed by totalitarian regimes in Europe]: Այս իրողությունները, մասնավորապես խորհրդային բանակի հաղթանակներին նվիրված և խորհրդային անցյալը հիշեցնող հուշարձանների

զանգվածային ապամոնտաժումը Արևելյան Եվրոպայում խստորեն քննադատվում էր ռուսական հասարակական և քաղաքական շրջանակների կողմից:

ԵՄ-ի արևելյան քաղաքականության հերթական հանգրվանը դարձավ 2009 թ. մայիսին հիմնադրված Արևելյան գործընկերություն նախաձեռնությունը: Գաղտնիք չէ, որ այս նախաձեռնության շրջանակներում ԵՄ-ի և ԱլԳ երկրների հարաբերությունների խորացման ֆոնին լուրջ խնդիրներ առաջ եկան Ռուսաստանի և վերջիներիս միջև: 2013 թ. Վիլնյուսում կայացած գագաթնաժողովը դարձավ հետագա տարիներին ԱլԳ-ում առաջ եկած ճգնաժամի նախերգանքը[1]:

Բնականաբար երկու կողմում էլ հռետորաբանությունը ավելի կոշտ և անհանդուրժող դարձավ: Վերստին թեժացած պատմության շուրջ բանավեճը իր գագաթնակետին հասավ 2019 թ. սեպտեմբերին, երբ Եվրոպական խորհրդարանն ընդունեց բանաձև Ռիբբենտրոպ-Մոլոտով պակտի 80-րդ տարելիցի կապակցությամբ՝ նշելով, որ այս փաստաթուղթը ճանապարհ հարթեց ապագա պատերազմի համար: Բացի այդ, բանաձևը փաստում էր, որ Ռուսաստանը ոչ միայն չի դատապարտում, այլև պաշտոնական հռետորաբանության մեջ ժխտում է պատասխանատվությունը և Արևմուտքին մեղադրում թշնամանք սերմանելու մեջ՝ դրանով քարոզչական հիմք ստեղծելով ԱլԳ երկրների նկատմամբ իր գործողությունների համար [European Parliament resolution on the 80th anniversary of the start of the Second World war and the importance of European remembrance for the future of Europe]:

Ինչպես տեսնում ենք, եվրոպական կառույցների գնահատականները տարեցտարի առավել կոշտ են դառնում՝ բացահայտորեն մատնանշելով ետպատերազմյան ժամանակաշրջանում Արևելյան Եվրոպայում ԽՍՀՄ քաղաքականության և արդի շրջանում Ռուսաստանի գործելաոճի միջև զուգահեռները: Քիչ չեն՝ հատկապես Արևելյան Եվրոպայի երկրների իշխանությունների ներկայացուցիչները, ովքեր իրենց հանրային ելույթներում համեմատություններ են կատարում խորհրդային ղեկավարների և ներկայիս Ռուսաստանի իշխանությունների միջև: Այս բոլոր իրողությունները առավել խորացնում են ճգնաժամը ոչ միայն ԵՄ-ի և Ռուսաստանի, այլ նաև վերջինիս և ԱլԳ երկրների միջև հարաբերություններում:

Պատմական իրադարձությունների շուրջ բանավեճը, որը իրավաչափ և անհրաժեշտ գործընթաց է և կարևոր տեղ է զբաղեցնում Եվրոպայում՝ շատ հաճախ տարբեր հակասությունների առիթ է դառնում ոչ միայն եվրոպական երկրների, այլ նաև առանձին երկրների հասարակական և քաղաքական տարբեր ուղղությունների ներկայացուցիչների միջև: Բավական է հիշել մարշալ Պետենի շուրջ 2018 թ. Առաջին աշխարհամարտի 100-ամյակի միջոցառումների ժամանակ Ֆրանսիայում ընթացող քննարկումները: Մինչդեռ, պատմական բանավեճի թեժացումը ԵՄ-ի և Ռուսաստանի միջև ընդգծված ձևով բևեռացնում է ոչ միայն եվրոպական երկրների և ռուսական հասարակությունների կարծիքները, այլև ծառայեցվում է աշխարհաքաղաքական առաջնահերթությունների իրագործման գործընթացին:

Ռուսաստանի Դաշնության դիտակետը: ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի Դաշնության և արևմտյան երկրների միջև բացվեց հարաբերությունների նոր էջ՝ իր բոլոր

[1]ԵՄ Արևելյան գործընկերություն նախաձեռնությունը ընդգրկում էր վեց երկրներ՝ Ուկրաինա, Բելոռուս, Մոլդովա, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան:

հակասություններով հանդերձ: Դրանց շարքում էին Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության (ՆԱՏՕ), այնուհետև ԵՄ-ի ընդլայնումը, ԵՄ-ի արևելյան հարևան երկրներում իրականացվող նախաձեռնությունները, որոնք լուրջ հարված էին Ռուսաստանի ռազմաքաղաքական և տնտեսական շահերին: Չնայած այս ամենին, Ռուսաստանի իշխանությունները փորձում էին մաս կազմել Երկրորդ աշխարհամարտի ավարտին, ողբերգական իրադարձությունների նվիրված հիշատակի արարողություններին: Յուրօրինակ համերաշխության օրինակ էր 2004 թ. հունիսի 6-ին Նորմանդիայում դաշնակիցների զորքերի ափհանման 60-րդ տարեդարձի տոնակատարությունը, որին առաջին անգամ մասնակցում էր նաև Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը [Schröder: D-Day is a symbol of Freedom]:

2005 թ. մայիսի 9-ին հիսուն երկրների պատվիրակություններ, այդ թվում Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերը, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը, Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը, մասնակցեցին Մոսկվայում Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 60-ամյակի միջոցառումներին: Այս միջոցառմանը մասնակցում էր նաև Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվասնևսկին, չնայած բազմաթիվ հակադիր կարծիքների առկայության [Leaders mourn Soviet wartime dead]:

Սակայն, այս թվացյալ համերաշխության մթնոլորտում տեղ էին գտնում Երկրորդ աշխարհամարտի և դրա հետևանքների վերաբերյալ գնահատականների շուրջ փոխադարձ հանդիմանություններ և մեղադրանքներ: Այսպես, 2005 թ. հունվարին Օսվենցիմի ազատագրման 60-րդ տարելիցի կապակցությամբ իր ելույթում Ռուսաստանի նախագահը բարձրաձայնեց պատմության վերաշարադրման անթույլատրելիության, զոհերին ու դահիճներին, ազատարարներին ու օկուպանտներին նույն հարթությունում ներկայացնելու սխալ գործելաոճի մասին: Ռուսաստանի նախագահը առանձնահատուկ ընդգծում էր, որ խորհրդային զորքերն առաջինը ականատես եղան նացիստական ոճրագործություններին և հանգցրեցին Օսվենցիմի, Մայդանեկի, Տրեբլինկայի վառարանները, փրկեցին Կրակովը վերջնական կործանումից՝ այս կռիվներում կորցնելով 600.000 կարմիրբանակայիններ [В государственном музее «Аушвиц-Беркенау» началась мемориальная церемония памяти узников Освенцима]: Ակնհայտ է, որ այս ելույթով Վ. Պուտինը բարձրաձայնում էր ռուսական կողմի համար թերևս առավել անընդունելի իրողությունը՝ նացիզմի և ստալինիզմի նույնացումը:

Առավել հանգամանալից այս խնդիրների մասին Վ. Պուտինը գրում էր 2005 թ. մայիսին ֆրանսիական «Ֆիգարո» թերթում տպագրված իր «Նացիզմի դեմ տարած հաղթանակի դասերը» վերնագրով հոդվածում: Խոսելով ֆրանս-ռուսական համագործակցության մասին՝ Ռուսաստանի նախագահը գրում էր. «Մեր հայրերն ու պապերը կիսում էին պատերազմի դվարությունները, բայց չէին կիսում 1945 թ. ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը»: Արձագանքելով եվրոպական կողմի 1939 թ. օգոստոսին կնքված Ռիբբենտրոպ-Մոլոտով համաձայնագրի հետ կապված մեղադրանքներին՝ Վ. Պուտինը գրում էր, որ 1989 թ. ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը տվել է այս փաստաթղթի իրավական և բարոյական գնահատականը: Հետևաբար մերձբալթյան երկրների կողմից այս հարցի շահարկումը կրում է սպեկուլյատիվ բնույթ: Իսկ ետպատերազմյան

աշխարհակարգի համար պատասխանատվությունը կրում են հակահիտերյան կոալիցիայի՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, ԽՍՀՄ առաջնորդները [Путин поделился с французами "Уроками победы над нацизмом"]:

Ինչպես արդեն նշել ենք, 2019 թ. սեպտեմբերին Եվրոպական խորհրդարանի կողմից Ռիբբենտրոպ-Մոլոտով պակտի 80-րդ տարելիցի կապակցությամբ ընդունված բանաձևը մեծ արձագանք ստացավ Ռուսաստանում, որը նախագահ Վ. Պուտինի կողմից որակվեց իբրև «անամոթ սուտ» [Vladimir Putin condemns EU stance on Nazi-Soviet WWII pact]: 2020 թ. հունիսին հրապարակվեց Վ. Պուտինի «Մեծ հաղթանակի 75-րդ ամյակը. պատմության և ապագայի առջև ընդհանուր պատասխանատվությունը» վերնագրով հոդվածը: Սկսելով այն իր ընտանիքի պատերազմի տարիներին ունեցած ողբերգությամբ՝ Ռուսաստանի նախագահը շեշտադրում էր նախկին ԽՍՀՄ յուրաքանչյուր ընտանիքի համար Հայրենական մեծ պատերազմի տեղն ու դերը [75 лет Великой Победы: общая ответственность перед историей и будущим]: Հետևաբար, յուրաքանչյուր ավերված հուշարձան, ապամոնտաժված հուշաքար անարգանք էր Արևելյան Եվրոպայի ազատագրման համար զոհված տարբեր ազգությունների ներկայացուցիչների նկատմամբ:

Ի պատասխան Եվրոպական խորհրդարանի բանաձևի, ըստ որի Ռիբբենտրոպ-Մոլոտով համաձայնագիրը ճանապարհ հարթեց պատերազմի համար, Վ. Պուտինը գրում էր, որ 1938 թ. կնքված Մյունխենյան փաստաթուղթն էր պատերազմի «հրահանի ձգանը» (спусковым крючком): Ավելին, պատերազմի պատճառների մեջ պետք է փնտրել Վերսալի պայմանագիրը, Ազգերի լիգայի անկարողությունը կանխելու 1930-ական թթ. Եվրոպայում ազգայնամոլության տարածումը, Ավստրիայի բռնակցումը և այլն:

Հատկանշական է, որ Վ. Պուտինը գրում էր ԱՊՀ երկրներ առաջնորդների հետ ունեցած քննարկումների և միասնական տեսակետի մասին՝ սերունդներին փոխանցել այն գաղափարը, որ նացիցմի դեմ պայքարը ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների ճակատում և թիկունքում միասնաբար տարած հաղթանակն է: Այս հանգամանքի ընդգծումը կարևոր էր, քանի որ Արևելյան Եվրոպայում արմատավորված տեսակետները աստիճանաբար ներթափանցում էին նաև նախկին ԽՍՀՄ երկրների քաղաքական և հասարակական շրջանակներ: Դրա դրսևորումներից մեկը կարելի է համարել 2009 թ. վրացական իշխանությունների որոշմամբ Քութայիսիում կառուցված Զինվորական փառքի հուշահամալիրի պայթեցումը, որի տեղում նախատեսվում էր կառուցել Վրաստանի խորհրդարանի շենքը: Այս իրադարձությունը խստորեն քննադատած ռուսական իշխանությունները 2010 թ. դեկտեմբերին հուշարձանը վերակառուցված ձևով վերաբացեցին Մոսկվայում «Ֆաշիզմի դեմ պայքարում մենք միասին էին» խորագրով [На Поклонной горе откроют памятник "В борьбе против фашизма мы были вместе"]:

Ռուսաստանի նախագահի հոդվածի որոշ դրվագների մեջբերումը, ցույց է տալիս ռուսական կողմի հիմնական մտահոգությունները, որոնցից շատերը հիմնավորված և արդարացի են: Սակայն, այս հիմնավոր դժգոհությունների կողքին Ռուսաստանում վերջին տարիներին ի հայտ են գալիս մտահոգիչ իրողություններ, որոնց մասին վկայում են սոցիոլոգիական հարցումները: Խոսքը Ի. Ստալինի անձի վերաբերյալ գնահատականների և ընկալումները փոփոխություններն են: 2019 թ. «Լևադա-կենտրոնի» կողմից անցկացված հարցման ընթացքում հարցվածների 70 %-ը դրական էր գնահատում Ի. Ստալինի դերը Ռուսաստանի պատմության մեջ:

Միայն 19 %-ն էր այն համարում բացասական [Уровень одобрения Сталина россиянами побил исторический рекорд]: Մինչդեռ «Հանրային կարծիքի ուսումնասիրության համառուսաստանյան կենտրոնի» հետազոտությունները ցույց էին տալիս, որ 2007 թ. հարցվածների միայն 15 %-ը, իսկ 2011 թ. 26 %-ն էին Ի. Ստալինի դերակատարությունը Ռուսաստանի պատմության մեջ գնահատում դրական [Популярность Сталина в России стремительно растет]: Ակնհայտ է, որ տեղի էին ունենում որոշակի տեղաշարժեր: Իհարկե, սա առաջին հերթին կապվում է Հայրենական պատերազմում տարած հաղթանակի հետ: Արևմուտքում խիստ բացասաբար ընդունվեց նաև Ռուսաստանում ստալինյան բռնաճնշումների զոհերի բացահայտման և նրանց հիշատակի հավերժացման խնդիրներին նվիրված «Մեմորիալ» կազմակերպության գործունեության կասեցումը:

Եզրակացություն: Այսպես, Երկրորդ համաշխարհային պատերազմը, ետպատերազմյան զարգացումների թեման ներկայումս դարձել է Եվրոպական միության և Ռուսաստանի փոխհարաբերությունների համատեքստում բավական ծանրակշիռ իրողության: Երկու կողմերն էլ անցյալի իրադարձությունների կամայական մեկնությունն ու վերաշարադրումը ծառայեցնում են իրենց աշխարհաքաղաքական առաջնահերթությունների իրագործման գործընթացին: Սակայն, այս իրողությունը ստեղծում է լուրջ բարոյական և հոգեբանական ճգնաժամ՝ ոչ միայն եվրոպական և ռուսաստանյան, այլև նախկին ԽՍՀՄ երկրների հասարակություններում: Հասկանալի է, որ այս հանգամանքը լիովին հակասում է վերջին տարիներին Եվրոպայում այլատյացության, հակասեմիտիզմի, անհանդուրժողականության, Ատելության խոսքի դեմ պայքարի մասին ամենօրյա խոսակցություններին, կազմակերպված արշավներին: Մի կողմից եվրոպական կողմը, կրկնում է պատմական տարբեր շրջաններում տեղ գտած գործելաոճը, որը լավագույնս ներկայացրել է Ն. Դանիլևսկին՝ գրելով, որ Եվրոպայի համար Ռուսաստանը մշտապես հանդես է գալիս որպես Ահրիման* [Данилевский Н., 2019, 28]: Եվրոպական պատմագիտական միտքը երկու իրողություններ փորձում է ներկայացնել նույն հարթության վրա՝ խորհրդային Կարմիր բանակի կողմից Արևելյան Եվրոպայի ազատագրումը և ետպատերազմյան ժամանակաշրջանում ստալինյան վարչակարգի կողմից իրագործված քաղաքականությունը: Դրանով իսկ սրելով և բարդացնելով պատմական բանավեճը: Մյուս կողմից բավական հակասական դիրքորոշում են որդեգրել նաև ռուսաստանյան իշխանությունները՝ փորձելով արդարացնել խորհրդային անցյալի տարբեր դրվագներ, որն իր հերթին կարող է բացասական հետևանքներ ունենալ:

Գրականության ցանկ

Օրուել Ջ. 1984, Երևան, 2012:

В государственном музее «Аушвиц-Беркенау» началась мемориальная церемония памяти узников Освенцимаhttps://www.1tv.ru/news/2005-01-27/236329-

* Ահրիմանը զրադաշտականության մեջ չարի մարմնացումն էր:

v_gosudarstvennom_muzee_aushvits_berkenau_nachalas_memorialnaya_tseremoniya_pamyati_uznikov_osventsima [25.03.20]

Данилевский Н. 2019, Россия и Европа, Москва.

На Поклонной горе откроют памятник "В борьбе против фашизма мы были вместе" https://www.vesti.ru/article/2094398 [20.02.20]

Переписка председателя Совета министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой отечественной войны 1941-1945 гг., Т.1, Москва, 1976.

Популярность Сталина в России стремительно растет https://www.bbc.com/russian/society/2011/04/110427_stalin_vciom_support [27.03.20]

Путин поделился с французами "Уроками победы над нацизмом" https://lenta.ru/news/2005/05/07/putin/ [21.03.20]

Уровень одобрения Сталина россиянами побил исторический рекорд https://www.rbc.ru/politics/16/04/2019/5cb0bb979a794780a4592d0c [03.03.20]

75 лет Великой Победы: общая ответственность перед историей и будущим https://rg.ru/2020/06/19/75-let-velikoj-pobedy-obshchaia-otvetstvennost-pered-istoriej-i-budushchim.html [09.03.22]

Declaration of the European Parliament on the proclamation of 23 August as European Day of Remembrance for Victims of Stalinism and Nazism (2010/C 8 E/10) https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2010:008E:0057:0059:EN:PDF [20.02.20]

European Parliament resolution on the sixtieth anniversary of the end of the Second World War in Europe on 8 May 1945 https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P6-TA-2005-0180+0+DOC+XML+V0//EN [22.03.20]

European Parliament resolution on the 80th anniversary of the start of the Second World war and the importance of European remembrance for the future of Europe https://www.europarl.europa.eu/doceo/document/B-9-2019-0098_EN.html [17.03.20]

Report from the Commission to the European Parliament and to the Council. The memory of the crimes committed by totalitarian regimes in Europe COM (2010) 783 final https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52010DC0783&from=EN [19.02.20]